
ՎԱՀԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍ

ԱԼՈՅԱՆ Լ. Ա.

XX դ. առաջին երկու տարիներին «Մշակի» էջերում փայլեց մի տաղանդավոր երիտասարդ, որն ավարտել էր Լայպցիգի համալսարանը, ստացել գիտության դոկտորի աստիճան, ուսանողական տարիների ընթացքում թղթակցել «Մշակին», սակայն կեղծանուններով, որն էլ հնարավորություն չտվեց մեզ անդրադառնալու նրա գործունեության ուսանողական շրջանին:

Նա ծնվել է Վանում, 1876 թվականի նոյեմբերի 10-ին: Սկզբնական կրթությունը ստացել Վանի հայկական դպրոցում, ապա, ծնողների հետ տեղափոխվելով Թիֆլիս, դարձել Ներսիսյան դպրոցի սան, որը գերազանց գնահատականներով ավարտել է 1894-ին: Այնուհետև մեկնել է Գերմանիա՝ ուսանելու: Ուսումնասիրել է գրականություն, պատմություն, փիլիսոփայություն: Ավարտելով ուսումը՝ 1901-ին վերադարձել է Թիֆլիս և դարձել «Մշակի» աշխատակիցներից մեկը՝ վարելով թատերական գրախոսի պաշտոն, ապա նաև՝ «Եվրոպական մտքից և գրականությունից» բանասիրական բաժինը: Նրա նպատակն էր հայ հասարակությանը ծանոթացնել ինչպես հայոց թատրոնի, այնպես էլ եվրոպական թատերական նորություններին: Լեոն գրում էր. «Իր մասնագիտությունը նա ներկայացնում էր համալսարանական գիտության՝ պատմության և գրականության ասպարեզներում: Նա մեծ նպատակներ ուներ իրագործելու, իսկ դոկտորի աստիճանը նրան չէր կուրացնում»¹: Ավելին, Լեոն բազմիցս է գրուցել նրա հետ, որ շարադրի հայոց պատմությունը նորովի, քանի որ շատ էր զգացվում այդ պակասը, իսկ նա, որպես հմուտ մասնագետ, կարող էր այդ գաղափարը իրականացնել: Այս նպատակով էր հենց, որ նա 1902-ի սեպտեմբերին մեկնեց Էջմիածնի Գևորգյան ճեմարան՝ դասավանդելու ապա և ուսումնասիրելու հայոց պատմական աղբյուրները:

Անդրադառնալով Պետրոս Դուրյանի ծննդյան 50-ամյակին՝ նա գրում է. «Եվրոպական համարյա բոլոր ազգերը իրենց նշանավոր գրական, ինչպես և հասարակական տարբեր գույնի գործիչների ծննդյան կամ մահվան տարեդարձը հիշատակալից հարգանքների, շատ անգամ մինչև իսկ մեծ տոնախմբությունների առարկա են դարձնում: Իսկ մեր կյանքում այս գովելի սովորությունը տարաբախտաբար մի հազվադեպ, բացառիկ երևույթ է: Ժամանակի անիվը իր ծանծաղ, անսրընթաց պտույտներով անգամ թանձրացնում է մոռացկոտության այն քողը, որ մենք՝ հայերս, մի պաղարյուն անտարբերությամբ սիրում ենք սփռել մեր թե՛ գրական և թե՛ հասարակական գործիչների ետևից» (1901, N 167):

Նույն կերպ, 1901 թ., հայ գրականությունը համեմատելով եվրոպականի հետ, նա հայտարարում է, թե առաջինը ցուցաբերում է անշարժություն և անտարբերություն:

¹ Մշակ, 1902, N 283 (այսուհետև «Մշակի» տարբերվերը և համարները կտրվեն շարադրանքին կից):

Կարծում ենք՝ Նալբանդյանը ակնարկում էր այն, որ «Մշակը», որի աշխատակիցն էր նա, առաջնակարգ գրողների շարքում չէր ուզում հիշատակել Հովհ. Հովհաննիսյանի, Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի և այլոց անունները: Նա Դուրյանին բնորոշում է որպես քնարերգու բանաստեղծի, այս ասպարեզում է նա տեսնում Դուրյանի տաղանդի մեծությունը և նրան նույնչափ բարձր չի գնահատում որպես դրամատուրգի: Նա գրում է. «Դուրյանի քնարը երեք մոտիվներ է հնչեցնում՝ սիրո, բնության, վշտի և մասամբ էլ բողոքի երգեր, որոնք չնայած թվով նվազ, բայց մեր քնարերգական բանաստեղծության ամենափայլուն գոհարներն են: Նա մի քնարերգակ է՝ բառի իսկական նշանակությամբ, թե իր հարուստ արվեստով, սահուն, անբռնազբոսիկ ոճով, որի երաժշտականությունն ու հնչեղությունը երբեմն մի դյուրական մելոդիայի ալիքների է նմանվում» (1901, N 168-170):

Նալբանդյանը բարձր է գնահատում հրատարակիչ Հովհաննես Արամյանցի ձեռնարկը, որը նպատակ ուներ համառոտ կենսագրություններով ազգային և օտար նշանավոր անձնավորությունների կյանքը և գործունեությունը ծանոթացնել հայ ընթերցողներին: Հրատարակչական այս շարքի մեջ նա նշում է Թովյանի գրքի թերությունները, մասնավորապես այն, որ Բյորնսոնի կենսագրության մեջ նորվեգացի նշանավոր բանաստեղծի դեմքը ամբողջովին չի պատկերված: «Բյորնսոն մարդը, հասարակական գործիչն ավելի է գրավել կենսագրողին, քան Բյորնսոն բանաստեղծը», - գրում է նա: Կենսագիրը մեծ ուշադրություն է դարձրել նրա պիեսներին, այնինչ նա ավելի նշանավոր է իր վեպերով ու պատմվածքներով (1902, N 26):

Ուշագրավ է Նալբանդյանի հոդվածը՝ նվիրված Ռ. Վիրիսլի 80-ամյակին, որը բազմակողմանի ու ճանաչված գիտնական էր ողջ Եվրոպայում բժշկագիտության, մարդաբանության և ազգագրության բնագավառներում: «Եվրոպական մտքից և գրականությունից» բանասիրական շարքում նա ընդարձակ հոդված է նվիրել Գեորգ Բրանդեսին (1902, N 16), որի 60-ամյակը լրանում էր այդ օրերին: Ըստ Նալբանդյանի՝ Բրանդեսը ազատամիտ հայացքների տեր հեղինակ է, որին վիճակված էր համարյա ամենուր շարունակ հալածանքի բովից անցնել՝ չհրաժարվելով 40 տարվա իր դավանանքից: Նալբանդյանը բարձր է գնահատում հատկապես նրա սկզբունքայնությունն ու առաքինությունը:

Նալբանդյանն ընդարձակ հոդված է նվիրել Վ. Հյուգոյի ստեղծագործությանը՝ ընդգծելով նրա արվեստի անանց արժեքը. «Յուրաքանչյուր ազգի պատմական-հասարակական կյանքում երևան են գալիս անձնավորություններ, որոնք այս կամ այն ասպարեզում մեծության մի հետք են թողնում իրենց ետևից և այդպիսով որոշ դասակարգի և նույնիսկ սերունդների շրջանում անմահանում: Բայց գրական մեծությունների առավելությունը, բարոյական արժանիքի գերազանցությունը կայանում է նրանում, որ սովորաբար նրանց հիշատակը ոչ միայն այս կամ այն սահմանափակ շրջանում, այլ ողջ ազգի հիշողության մեջ է վառ մնում» (1902, N 33):

Նալբանդյանը հետաքրքրական հոդվածների շարք է նվիրել նաև Չ. Լոմբրոզոյի գործունեությանը (1902, N 136-140): Իտալացի գիտնականը նոր թեզի հեղինակ է քրեագիտության բնագավառում, որ բաժանում է երկու մասի՝ «ոճրագործական մարդաբանություն» և «ոճրագործական սոցիոլոգիա»: Հետաքրքրական է Լոմբրոզոյի հետևու-

թյունը դեռ 170 տարի առաջ, երբ նա առաջ էր քաշում գենի հարցը, այսինքն՝ ժառանգականության դերն այս բնագավառում: Նալբանդյանը բազմաթիվ թատերախոսականների հեղինակ է, որոնցում ներկայացրել է ոչ միայն հայոց թատրոնի գործունեությունը, այլև մեծ ուշադրություն դարձրել վրացական և ռուսական թատրոններում բեմադրվող նոր ներկայացումներին: Նա ավստոսանք է հայտնում, որ հայերը մեծ մասամբ Թիֆլիսի ռուսական ներկայացումների մեջ են տեսնում իրական կյանքի պատկերը, այնինչ այդ կարող է անել հայ թատրոնը՝ վերհանելով միջավայրն իր իսկության մեջ: Նալբանդյանը կարծում է, որ դրամատիկների հասարակական գերիշխանության դարում հաջողությունը և փողը, ինչ գնով էլ որ ձեռք բերված լինեն, դառնում են տեսչանք, որի իրագործման համար գոհվում են բարոյական սկզբունքները: Ձևական բարեգործության ներքո քողարկվում են անմարդկային հափշտակությունները, կաշառակերությունը, մարդատեցությունը և ամեն տեսակ այլ արատներ: Բայց համընդհանուր անարդարությունը, թմրած բարոյականության պահանջներն ամբարում են հասարակության մեջ էլեկտրական ուժեր, որոնք մի օր կբռնկվեն որպես փոթորիկ, եզրակացնում է նա:

Գ. Հաուպտմանի «Կառապան Շենոել» դրաման գնահատելիս նա հեղինակին համարում է Գերմանիայի ժամանակակից ամենամեծ դրամատուրգը, մանրամասն ներկայացնում Հաուպտմանի բարդ ու դժվարին կենսագրությունը (1901, N 221): Նալբանդյանը ուշագրավ դիտողություններ է արել նաև Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի բեմականացման մասին (1901, N 222), որը «Ասլան Բալասի» վերտառությամբ ներկայացվել էր հանդիսատեսին: Օստրովսկու «Անմեղ մեղավորների» մասին նա գրում է, թե հեղինակն ունի տաք ու զգայուն սիրտ, և ամենագլխավորը՝ դիտելու նուրբ ընդունակություն (1901, N 235):

Մեծ բանավեճի տեղիք է տվել Նալբանդյանի գրախոսականը Շիրվանզադեի «Եվգինե» նոր պիեսի մասին, որ նա համարում է համեմատաբար հաջողված, քան նրա «Իշխանուհին» էր (1901, N 243): Նալբանդյանը նկատում է, որ ինչպես ռուս, այնպես էլ արևելահայ գրողներից շատերի նման Շիրվանզադեն տեղի է տալիս քարոզչական, հրապարակախոսական ոճին, որը բեմարվեստի հետ քիչ առնչություն ունի:

«Եվգինե» պիեսը ջերմորեն էր ընդունվել թատերասերների կողմից, հեղինակին մի քանի անգամ բեմ են հրավիրել, շնորհավորել հաջողության համար: Բեմ է բարձրացել նաև Վահան Նալբանդյանը, որպես «Մշակի» թղթակից, և շնորհավորել հեղինակին, սակայն հաջորդ օրվա «Մշակի» համարում արված դիտողություններին Շիրվանզադեն կրքոտ պատասխան է տվել:

1902 թվականի N 11-ում «Մշակը» տպագրում է «Հայերը “Кавказский вестник” ամսագրի մեջ» հոդվածը, որտեղ անդրադառնում է Ալ. Խատիսյանի մի քննադատությանը՝ ուղղված Վ. Նալբանդյանին, որ նա սխալ է վերլուծել պիեսը: Անստորագիր հոդվածի հեղինակը, ամենայն հավանականությամբ, Համբ. Առաքելյանն է: Նա, պաշտպանելով իր երիտասարդ գործընկերոջը, գրում է, որ «Մշակը», վերլուծելով այդ գրվածքը, ցույց տալով նրա պակասություններն ու արժանավորությունները, ամենին էլ նպատակ չի ունեցել գոհացնելու պիեսը մեծարելուն ուղղված՝ Խատիսյանի ակնկա-

լիքները: «Որ Խատիսյանն իրավունք ունի այլ կերպ մտածելու, ոչ ոք չի ժխտում, բայց ինչ իրավունքով նա պահանջում է, որ ամենքն իր նման մտածեն ու իր նման դատեն»:

1901-ի 248-249 համարներում Նալբանդյանը տպագրել է Շեքսպիրի «Արքա Լիր» ողբերգության մասին մի ընդարձակ հոդված՝ հատկապես կանգ առնելով մեծ դրամատուրգի կողմից հոգեբանական ծալքերի նրբին բացահայտումների վրա:

Շիլլերի «Օդլեսնի կույսը» ներկայացման առիթով նա վերհանում է գերմանացի դասականի ինքնատիպությունը. իր գործով նա ավանդում է մեզ ազատության և մաքուր, անխարդախ հայրենասիրության մի վեհ տիպար, եզրակացնում է քննադատը (1901, N 261): Անդրադառնալով Արմենյան տաղանդավոր դերասանի բեմելին (երբ Թիֆլիսի արտիստական թատրոնում բեմադրվում էր Ալֆրեդ դը Մյուսեի «Վաղաժամ վճիռ» պիեսը), Նալբանդյանը գտնում է, որ Արմենյանը Վալենտինի դերը կատարել է մեծ վարպետությամբ՝ տիրապետելով իր շարժումներին ու բեմական կեցվածքին: Նա առավելություն է համարում նաև Արմենյանի ձայնի հնչեղությունն ու ճկունությունը (1902, N 54):

Հետաքրքրական է Նալբանդյանի՝ սիրողների խմբի ներկայացման մասին անդրադարձը: Այդ խմբին տարիներ շարունակ սպասել են ինչպես հայ, այնպես էլ այլազգի հանդիսատեսները: Ռեժիսոր Արաքսյանը հասարակության դատին էր ներկայացրել «Տաղտկալի աշխարհ» պիեսը, որ մեծ հետաքրքրություն է ներկայացրել ինչպես Ֆրանսիայում, այնպես էլ եվրոպական այլ երկրներում: Այսպիսի պիես ներկայացնելը, ըստ Նալբանդյանի, բավական բարդ ձեռնարկում էր, սակայն սիրողների խումբը պատվով կատարեց այդ ստեղծագործությունը (1902, N 71):

Նալբանդյանը առաջինը գրեց նաև ռուս հայտնի դերասանուհի Ա. Պասխալովայի հյուրախաղերի մասին, երբ նա Թիֆլիսում հանդես եկավ Ջուդերմանի մի ներկայացման մեջ, որտեղ տիկնոջ լավագույն արժանիքը նա համարում է չափավորությունը, արտաքուստ տպավորություն թողնելու հակումից միանգամայն հեռու մնալը (1902, N 82):

Վ. Նալբանդյանն աշխատակցել է «Մուրճ» հանդեսին, որտեղ տպագրեց մի մեծ ուսումնասիրություն՝ Հ. Իբսենի մասին, և մատենագրական տեսություններ, իսկ «Մշակը» տպագրել է նրա թարգմանությամբ Գ. Մակաչիի «Օտարականը», Յու. Հարտի «Ծնունդ» ստեղծագործությունները, նա է գրախոսել նաև Կ. Լամպրեխտի «Գերմանական պատմությունը»: Արժանին պիտի հատուցել նաև նրա գերմաներեն ուսումնասիրությանը՝ Լ. ֆոն Ռանկեի մասին, որը գերմաներենով 1902-ին լույս տեսավ Բեռլինում:

1902-ի սեպտեմբերին Նալբանդյանը հրավիրվեց Էջմիածին՝ որպես Գևորգյան ճեմարանի գրականության ուսուցիչ, իսկ դեկտեմբերի 19-ին «Մշակը» հաղորդեց նրա մահվան գույժը: Այդ օրը համընկավ Գր. Արծրունու մահվան 10-ամյակին, ահա թե ինչու շատ քիչ բան գրվեց հմուտ մի հրապարակախոսի մասին, որը մահացավ ընդամենը 26 տարեկան հասակում: «Մշակը» նրա մահը համարում է ցավալի կորուստ ողջ հայության համար, որովհետև, հանձին նրա, հայ մամուլը կորցրեց մի գործունյա, արդյունավետ աշխատակցի, հայ գրականությունը՝ մի ժիր

մշակի՝ պատրաստված եվրոպական լուրջ գիտությամբ, իսկ հայ հասարակությունը՝ մի առաջադեմ գործչի:

Կարճ եղավ Նալբանդյանի կյանքը, բայց այդ կարճ կյանքի ընթացքում էլ նա կարողացավ իր լուսման ներդնել հայ մտավոր մշակույթի անդաստանում:

ВААН НАЛБАНДЯН – ПУБЛИЦИСТ

АЛОЯН Л. А.

Резюме

В начале XX в. с редакцией “Мшака” сотрудничал талантливый литературный критик и журналист Ваан Налбандян, имя которого, как и имена многих сотрудников редакции этой газеты, по сей день предано забвению. Хотя и В. Налбандян сотрудничал с “Мшаком” недолго, однако успел выступить на его страницах с рядом заслуживающих внимание статей об армянской и европейской литературе, отличающихся новизной мышления.